

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողովի 27.08.2015 թ. նիստի

Մասնակցությամբ՝

ՀՀ Արմավիրի մարզպետ՝

Ա. Ղահրամանյանի

ՀՀ Արմավիրի մարզում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողովի

նախագահի տեղակալ՝

Ա. Ղուկասյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության վարչության պետ՝

Վ. Մկրտչյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ՝

Հ. Հարությունյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ՝

Ա. Պողոսյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի

գյուղատնտեսության և բնապահպանության

վարչության պետ՝

Ա.Այվազյանի

«Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի

գյուղատնտեսության և բնապահպանության

վարչության գյուղատնտեսության բաժնի պետ՝

Մ.Սարիբեկյանի

«Արմավիրի մարզի կարկտահարությունից տուժած համայնքների
ղեկավարների

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. 22.08.2015թ. ուժեղ քամու ուղեկցությամբ տեղի ունեցած կարկտահարության հետ կապված համայնքային հանձնաժողովների կողմից կազմված և մարզային հանձնաժողով ներկայացված ակտերը քննարկելու և համաձայնեցված ակտերը արտակարգ իրավիճակների հեղուկացման պարզադրված վնասները գնահատող հանրապետական հանձնաժողով ներկայացնելու մասին

/ Ա.Ղահրամանյան- «Արմավիրի մարզպետ,

Ա. Այվազյան- «Արմավիրի մարզպետարանի

աշխատակազմի գյուղատնտեսության

և բնապահպանության վարչության պետ/

Մինչև «Արմավիրի մարզպետ Ա.Ղահրամանյանի ամփոփիչ ելույթը, «Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ա.Այվազյանը ներկայացրեց 2015 թվականի օգոստոսի 22-ին «Արմավիրի մարզի թվով 8 համայնքներում ուժեղ քամու ուղեկցությամբ տեղի ունեցած կարկտահարության հետ կապված մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության իրականացրած աշխատանքների

վերաբերյալ ամփոփ փեղեկագրությունը/կցվում է/: Նա մասնավորապես նշեց, որ 2015 թվականի օգոստոսի 22-ին մարզի թվով 8 համայնքներում ուժեղ քամու ուղեկցությամբ փեղացել է կարկուտ, որը զգալի վնաս է պատճառել համայնքների գյուղացիական փերետություններին և մի շարք շինություններին: Օգոստոսի 23-ին ՀՀ Արմավիրի մարզպետը այցելել է բոլոր համայնքներ և հանձնարարել է համայնքների ղեկավարներին ստեղծել հանձնաժողովներ, արձանագրել պատճառված վնասները և ներկայացնել մարզպետարան, իսկ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղափերետության և բնապահպանության վարչության պեփին հանձնարարել է կազմակերպել նշված գործընթացները: Հանձնարարականի կատարման նպատակով համայնքներ են այցելել վարչության աշխատակիցները, որոնց միացել են նաև ԳԱՄԿ-ի մասնագետները: Համայնքների ղեկավարներին առաջարկվել է ստեղծվելիք հանձնաժողովների մեջ ընդգրկել գյուղապետարանների աշխատակիցներին, համայնքի ավագանու անդամներին, համայնքը սպասարկող ԶՕԸ-ների փեղամասի պեփերին, ինչպես նաև հողօգտագործողներին:

Հանձնաժողովները ուսումնասիրել են կարկտի և ուժեղ քամու հասցրած վնասները և կազմել են համապատասխան ցուցակներ, որոնք նշվել է հողօգտագործողի անուն, ազգանունը, վնասված հողատարածքի չափը և վնասվածության աստիճանը՝ ըստ մշակաբույսերի: Ծուցակները ներկայացվել են մարզպետարան և մարզպետարանի աշխատակազմի գյուղափերետության և բնապահպանության վարչության կողմից դրանք ամփոփվել են և համապատասխան ձևաչափով ներկայացվել են ՀՀ Արմավիրի մարզպետին: Դրանք Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում արտակարգ իրավիճակների հեղանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողովի որոշմամբ կներկայացվեն նաև ՀՀ գյուղափերետության և փարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություններ՝ համապատասխան ընթացք փալու նպատակով: Այն հարցադրմանը, թե ինչպես է որոշվել մշակաբույսերին հասցված վնասի չափը /տոկոսը/, պարզաբանվեց, որ բացակայում է նշված դեպքերում վնասների հաշվարկման մշակված և գործող մեթոդիկա, ուստի հանձնաժողովները վնասի չափերը հաշվարկել են դիփողական՝ /վիզուալ/, այսինքն՝ մոտավոր ձևով:

Այդ և մարզի այլ համայնքներում կարկտահարության արդյունքում կատարված գնահատումներով՝ եթե վնասի չափը եղել է մինչև 20 տոկոս, հողօգտագործողների հեղ համաձայնեցնելով, դրանք չեն արձանագրվել, հնարավոր պեփական աջակցության ծավալները չավելացնելու նպատակով: Հանձնաժողովների կողմից չեն արձանագրվել նաև այդ 8 համայնքներում վնասված շուրջ 100 հա առփույտի սերմադաշտերի փարածությունները, քանի որ նրանք հասցրել էին 1-2 հար հնձելու և որոշակի եկամուտ ստանալու պատճառով:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Ա.Ղահրամանյանը օրակարգային հարցի առնչությամբ Արմավիրի մարզում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողովի նիստի մասնակիցներին տեղեկացրեց, որ համայնքային հանձնաժողովներն ,իրոք, ավարտել են 2015 թվականի օգոստոսի 22-ին մարզի թվով 8 համայնքներում/Քարակերտ, Մյասնիկյան, Կողբավան, Բաղրամյան/Բաղր./, Դալարիկ, Բագարան, Մրգաշատ, Շենիկ / ուժեղ քամու ուղեկցությամբ տեղի ունեցած տրական կարկտահարության հետ կապված համապատասխան ակտերի կազմման աշխատանքները, որոնք ամփոփվել են ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչությունում: Նա միաժամանակ նշեց, որ անհրաժեշտ է համայնքներից մարզային հանձնաժողով ներկայացված և համաձայնեցված ակտերը և ամփոփ տեղեկավարությունը ներկայացնել պատկան մարմիններին՝ համապատասխան ընթացք տալու նպատակով:

Հանձնաժողովը որոշում է՝

1. Համայնքային հանձնաժողովների կողմից կազմված և մարզային հանձնաժողովում քննարկման արդյունքներով համաձայնեցված ակտերը և 2015 թվականի օգոստոսի 22-ին ՀՀ Արմավիրի մարզի վարչական տարածքի թվով 8 համայնքներում ուժեղ քամու ուղեկցությամբ տեղի ունեցած կարկտահարության հետևանքով գյուղացիական տնտեսություններին և շինություններին պատճառված վնասների վերաբերյալ ամփոփ տեղեկավարությունը/կցվում է/ պատկան մարմինների միջոցով ներկայացնել արտակարգ իրավիճակների հետևանքով պատճառված վնասները գնահատող հանրապետական հանձնաժողովին:

Հանձնաժողովի նախագահ՝



Մ.Քարտաշյան

Հանձնաժողովի քարտուղար՝



Դ. Դավթյան

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2015թ. օգոստոսի 22-ին ՀՀ Արմավիրի մարզի վարչական տարածքում տեղացած կարկրի հեղանջով գյուղացիական փերեցություններին պահճառած վնասների վերաբերյալ

N	Համայնքի անվանումը	ընդամենը վնասված տարածքը /հա/	Բանջար		Բուսրան		Խաղող		Պտուղ		Արևածաղիկ		հորոզագործողների թիվը	ծանոթություն
			տարածությունը /Հա/	վնաս. Աստիճանը %	տարածությունը /Հա/	վնաս. Աստիճանը %	տարածությունը /Հա/	վնաս. Աստիճանը %	տարածությունը /Հա/	վնաս. Աստիճանը %	տարածությունը /Հա/	վնաս. Աստիճանը %		
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1	Քարակերտ	2.0					2.0	40					1	
2	Մյասնիկյան	3.0			3.0	100							3	Ֆասթ-Կրեդիտ կապիտալ ՈՒՎԿ-5մլն. Դրամ, Արդշինինվեստ Բանկ -1.9մլն. Դրամ
3	Կողբավան	17			17	80-90							12	Սեֆ Ինտերնեշնլ-1.45 մլն դրամ, Պրո Կրեդիտ-15.75 մլն դրամ, Արդշինինվեստ -2.1 մլն. դրամ, Ֆինկա-1.8 մլն դրամ, Ակրա Կրեդիտ - 10.65 մլն դրամ, Կամուրջ-3.36 մլն դրամ,
4	Բաղրամյան /Բաղր./	83.13	13.31	40-60	20	80	38.2	40-80	8.52	40-80	3.1	60-70	30	Ակրա Կրեդիտ - 28.1մլն դրամ, Հայրիզնեսթանկ-2.0 մլն դրամ, Պրո Կրեդիտ-3.08 մլն. դրամ, ՎՏԲ-0.42 մլն. դրամ, Ֆարմ Կրեդիտ-2.0 մլն դրամ

5	Դալարիկ	126.8	3.6	70-80	76.7	80-85	46.5	70-80					89	Ակրա-Կրեդիտ-Ազրիկոլ բանկ 32.769 մլն. դրամ
6	Բազարան	87.6	51.05	100	27.95	100	0.6	100	8	100			19	Ակրա-Կրեդիտ-Ազրիկոլ բանկ 20.0 մլն. դրամ, Ֆինկա 4.822մլն. Դրամ, Արեգակ 3.03մլն. Դրամ, Ինեկո Բանկ-1.92մլն. Դրամ
7	Մրգաշատ	6.21					6.21	40					9	Ակրա-Կրեդիտ-Ազրիկոլ բանկ 2.8 մլն. դրամ
8	Շենիկ	346	24.5	100	139.3	100	67.72	80	89.09	80	25.35	80	118	Ակրա-Կրեդիտ-Ազրիկոլ բանկ 241.647մլն. Դրամ, Ֆիքա ՈՒՎԿ-11.426մլն. Դրամ, Ֆաստ-Կրեդիտ-9.29մլն. Դրամ, Ֆարմ-Կրեդիտ-Արմենիա-12.23մլն. Դրամ, Արեգակ ՈՒՎԿ-6.862մլն. Դրամ, Սեֆ ԻՆՏԵՐՆԵՇՆԼ-7.242մլն. Դրամ, Պրո-Կրեդիտ-7.45մլն. Դրամ, Կամուրջ ՈՒՎԿ-9.228մլն. Դրամ, Քարտ-ԱԳՐՈՒ ԿՐԵԴԻՏ-8.094 մլն. դրամ, Հայրիզնեսբանկ-2.0մլն. դրամ, Կոնվերս Բանկ-3.0մլն. դրամ, Մալաթիա ՈՒՎԿ-15.0մլն. դրամ
	Ընդամենը	671.7	92.5	40-100	284.0	80-100	161.2	40-80	105.6	40-80	28.5	60-80	281	476.418մլն. Դրամ

Ծանոթություն

Ուժեղ քամու և փոթորիկի հետևանքով վնասվել է նաև

1	Շենիկ համայնքի 27 ընտանիքներին պարկանող 776.2 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով ազրոշիֆրե և թիթեղյա տանիքները 1.9 մլն. դրամ արժեքով
2	Բաղրամյան (Բաղր.) համայնքի գյուղապետարանի շենքի թիթեղյա տանիքը 230քմ մակերեսով 1.5 մլն. դրամ արժեքով